

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Ախթալա համայնքի դպրոցի շենքի վերակառուցման նախագիծը կատարվել է պատվերի, նախագծային և ճարտարապետա-հատակագծային առաջադրանքների, «ՍԵՅՍՄԱՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացության հիման վրա:

Դպրոցի շենքն իրենից ներկայացնում է բազմանկյուն հատակագծով 40.84x16.49 մ արտաքին չափերով, մասնակի նկուղային հարկով երկու հարկանի քարե շինություն, առաջին և երկրորդ հարկերի մաքուր բարձրությունը կազմում է 3.9 մ, նկուղային հարկինը՝ 3.0 մ: Գոյություն ունեցող հատակները, փայտե պատուհանները և դռները ենթակա են փոխման, պատուհաններից և դռներից մի մասը մետաղապլաստից են, ներքին հարդարումն ենթակա է վերանորոգման, տանիքի ծածկույթը ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից է, կազմակերպված ջրահեռացումով:

Համաձայն «ՍԵՅՍՄԱՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացության դպրոցի շենքի կոնստրուկտիվ տարրերն ունեն հետևյալ բնութագրերը.

- Հիմքերը ժապավենային են, իրականացվել են խամքարաբետոնով:
- Պատերն իրականացվել են տուֆաքարերի «Միդիս» տիպի շարվածքով, կրացեմենտավազային շաղախի կիրառմամբ և ունեն 50սմ հաստություն: Գլխավոր և կողային ճակատների պատերի դրսի կողմի երեսաշարը սրբատաշ է, իսկ բակի ճակատը սվաղված է կիրավազային շաղախով: Գլխավոր ճակատի պատն ունի գեղեցիկ ճարտարապետական ձևավորումներ՝ սյունազարդ է, կամարաքավոր պատուհաններով և քիվի զարդաքանդակներով: Պարփակող պատերի պատվանդանային մասերի դրսի կողմի երեսաշարն իրականացվել է բազալտաքարերի «Մուշտակ» տիպի շարվածքով, կրացեմենտավազային շաղախի կիրառմամբ և պատվանդանային մասերն ունեն 55-60սմ հաստություն: Նկուղային հարկի պատերն իրականացվել են խամքարե շարվածքով:

- Նկուղային հարկի ծածկն իրականացվել է միաձույլ երկաթբետոնով (ե/բ), իսկ առաջին հարկի ծածկն ու վերնածածկն իրականացվել են փայտյա կոնստրուկցիաներով:

- Բարավորները միաձույլ երկաթբետոնից են, իսկ պատուհանների դրսի կողմից իրականացվել են սեպածև քարաշարվածքով:

- Սանդուղքներն իրականացվել են գլոցված պողպատե 18 համարի կրկնատավրից թեքահեծաններով ու հեծաններով, միաձույլ ե/բ հարթակներով և հավաքովի ե/բ հատիկավոր աստիճաններով:

- Միջնորմներն իրականացվել են պեմզաբետոնե 60մմ հաստությամբ սալերի և մասամբ տուֆաքարերի շարվածքով:

- Տանիքը լանջավոր է, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ, իրականացվել է փայտյա ծպեղնային ու կավարամածային կոնստրուկցիաներով և մետաղական ալիքավոր թերթերի ծածկույթով:

- Դպրոցի սալվածքն ասֆալտաբետոնից է և մասամբ վերանորոգվել է բետոնով:

Դպրոցը նախագծվել ու կառուցվել է մինչև Սպիտակի 1988թ. երկրաշարժը, ուստի ակնհայտ է, որ նրա ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներում կան անհամապատասխանությունները Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ II-6.02-2006 շիննորմերի պահանջների հետ: Շենքի կոնստրուկտիվ լուծումների մեծ մասը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ II-6.02-2006 շիննորմերի պահանջների հետ:

Նախագծով նախատեսվում է վերակառուցել միջնակարգ դպրոցը, այն երկհարկանի է նկուղային հարկով: Արտաքին կրող պատերով է, որի գլխավոր ու կողաճակատային պատերը իրականացված են սրբատաշ տուֆի շարվածքով, իսկ հետին ճակատը կոպտատաշ տուֆի շարվածքով՝ հարդարված ց/ավազային սվաղով: Նախատեսվում է սրբատաշ պատերը պահպանել սկզբնական տեսքով, իսկ հետին պատը ուժեղացումից հետո սավաղել ու ներկել ճակատային ներկով ինչպես տրված է նախագծում:

Դպրոցում նախատեսվում են հետևյալ սենքերը՝

Նկուղային հարկում նախատեսվում են պահեստային սենքեր: Առաջին հարկում նախատեսվում են թվով 5 դասասենյակ, տնօրենի աշխատասենյակ, բուժզննման սենք, ուսուցչանոց, անձնակազմի սանհանգույց, աշակերտական սանհանգույց, շախմատի և համակարգչային դասասենյակներ, գրադարան, ճաշարան խոհանոցով և միջանցներ: Երկրորդ հարկում նախատեսվում են թվով 7 դասարաններ, աղջիկների սանհանգույց, միջանցք-ռեկրեացիա, զինապահեստ:

Նախագծով նախատեսված է կատարել հետևյալ շինարարական աշխատանքները.

- Գոյություն ունեցող տանիքի ծածկույթի քանդում փայտանյութի հետ միասին
- Բոլոր փայտե, մետաղապլաստե դռների և պատուհանների ապամոնտաժում, հատակների, պատերի սվաղի, խարամաբետոնե միջնորմների և փայտե ծածկի քանդում
- Ե/բետոնե միաձույլ ծածկի իրականացում
- Պատերի ուժեղացում տորկրետացման եղանակով. ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԱՅՆ ՊԱՏԵՐԸ, ՈՐՈՆՑ ԴՐՍԻ ԵՐԵՍԱՇԱՐԸ ՍՐԲԱՏԱՇ Է, ՈՒԺԵՂԱՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԻԱՅՆ ՆԵՐՄԻՑ` ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ՇԱՊԻԿՈՎ /10 ՍՄ ՀԱՍՏՈՒԹՅԱՄԲ /: ԼԱՅՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՅՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՐԱՆՑ ՄԻԱՑՄԱՆ ՏԵՂԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆՑՆԵԼ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ՄԻԱԶՈՒՅԼ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ՇԱՊԻԿ /1.50 Մ ՉԱՓՈՎ/: ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՊԱՏԵՐԸ ՆԵՐՄԻ ԿՈՂՄԻՑ ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԵՎ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ՇԱՊԻԿՈՎ: ԱՅՆ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ, ՈՐՈՆՔ ԵՆԹԱԿԱ ԵՆ ՈՒԺԱՂԱՑՄԱՆ , ՄԻՆՉԵՎ ԲԵՏՈՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՍԿՍԵԼԸ ՆԱԽՕՐՈՔ ՊԵՏՔ Է. ՀԵՌԱՑՆԵԼ ԳԱԶԻ ՍԿԱՂԻ ՇԵՐՏԸ ,ՔԱՐԵ ՇԱՐՎԱԾՔԻ ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՂԱԶԻԳ ԿԱՐԱՆՆԵՐԸ ՄԱՔՐԵԼ ՇԱՂԱԽԻՑ` 1 - 3 ՍՄ ԽՈՐՈՒԹՅԱՄԲ, ՊԱՏԵՐԻ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ ՄԱՔՐԵԼ ԶՐԻ ՀՈՍՔԻ ՏԱԿ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽՈՋԱՆԱԿՆԵՐՈՎ, ՑԱՆՑԵՐԸ ՊԱՏԻՆ ԱՄՐԱՑՆԵԼ Փ10Ա500С ԽԱՐՍԽՆԵՐՈՎ` 600ՄՄ ՔԱՅԼՈՎ ՇԱԽՄԱՏԱԶԵՎ ԴԱՍԱԿՈՐՎԱԾՈՒԹՅԱՄԲ, ՆԱԽՕՐՈՔ ԽԱՐԻՍԽՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԵՂԵՐՈՒՄ ԳԱՅԼԻԿՈՆԵԼ ԱՆՑՔԵՐ /Փ 25 ՄՄ ՏՐԱՄԱԳԾԻ / ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԳԱՅԼԻԿՈՆՈՎ:ՍՐՍԿԻԶԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԼՑՆԵԼ ՊՈԼԻՄԵՐՑԵՆՏ ՇԱՂԱԽԸ,ՏԵՂԱԴՐԵԼ ԽԱՐԻՍԽՆԵՐԸ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՄՐԱՆԱՑԱՆՑԸ /Փ6Ա240 ՔԱՅԼ150 /150 / ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼ: ԻՐԱԿԱՆՑՆԵԼ ՊԱՏԻ ԸՆՇԱԾԵՓՈՒՄ /ՏՈՐԿՐԵՏԱՑՈՒՄ/ 6 ՍՄ ՀԱՍՏՈՒԹՅԱՄԲ В20 ԴԱՍԻ ՄԱՆՐԱՀԱՏԻԿ ԲԵՏՈՆԻ ՇԵՐՏՈՎ: ԻՍԿ «2».«3».«4».«5» ԱՌԱՆՑՔՆԵՐՈՎ ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ՄԻՋՆԱՊԱՏԵՐԸ ԻՐԱԿԱՆՑՆԵԼ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՏՈՐԿՐԵՏԱՑՈՒՄ:
- Լամինատից, կերամիկական և պրեսգրամիտե սալիկներից, վինիլային հատակների իրականացում
- Միջնորմների կառուցում թեթև բետոնե սալերից
- Մետաղապլաստե պատուհանների տեղադրում
- Ալյումինե /արտաքին/, ՄԴՖ-ից /ներքին/ և մետաղապլաստե դռների տեղադրում
- Ներքին և արտաքին հարդարման աշխատանքների իրականացում
- Նոր տանիքի կառուցում` նոր փայտանյութով և կազմակերպված ջրահեռացմամբ, փայտանյութի մշակում հակահրդեհային և հականեխման լուծույթներով, տանիքի ծածկույթի իրականացում ցինկապատ պրոֆիլավոր գունավոր թիթեղով /հաստ.-0.55 մմ/
- Արտաքին մուտքերի դիմաց մետաղական հիմնակմադքով և պոլիկարբոնատե ծածկույթով հովարի մոնտաժում
- Ներքին ջրամատակարարման և կոյուղու գծերի, սարքավորումների փոխում
- Ներքին էլ. լուսավորություն
- Բակի բարեկարգում. մետաղական ցանկապատի կառուցում, մետաղական դարպասի և դռնակի մոնտաժում, նոր սալվածքի կառուցում, բասկետբոլի վահանների տեղադրում, ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում, բազալտե և բետոնե եզրաքարերի տեղադրում, դպրոցի հյուսիսային բակում խարամից ծածկույթի իրականացում, ասֆալտաբետոնե ծածկույթի հյուսիսային կողմի մասում` բնահողի և ասֆալտաբետոնե ծածկույթների միացման եզրի հատվածում բետոնե եզրաքարի տեղադրում
- Ինժեներական մասերի բացատրագրերը նայել համապատասխան բաժիններում

ՏՐՈՒՒ	II. ԷՔՈՒՅՈՒ		ԱԽԹԱԼԱՅԻ ԹԻՎ 2 ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ		
ԴՆՃ	II. ԷՔՈՒՅՈՒ				
ԱՆԱՆՈՒՑ	Խ.ՊԻՊՈՅՈՒ		<div> <div></div> <div>ԲԱՅԱՏՐԱԳԻՐ</div> </div>	ՓՈՒԼ	ԹԵՊ
				ԱՆ	ՏՇ-
<div> <div></div> <div></div> </div>				ՏԻՔՍԻԹԵԾԾԻ»	

ԵԾԱ

Ա. ԻՅԿԾԵՐ